

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՄԵՐԻ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

**Իշխանությունների բաժանման եվ հավասարակշռման  
սահմանադրաիրավական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում**

**ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական,  
ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք,  
պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2017**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

**САРГСЯН МЕРИ МНАЦАКАНОВНА**

**КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ГАРАНТИИ РАЗДЕЛЕНИЯ  
И БАЛАНСА ВЛАСТЕЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**АВТОРЕФЕРАТ**

**диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по  
специальности 12.00.02 – “Публичное право – конституционное,  
административное, финансовое, муниципальное, экологическое,  
европейское право, государственное управление”**

**ЕРЕВАН 2017**

**Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական  
համալսարանում**

**Գիտական ղեկավար՝**

իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր **Ն.Ա. Այվազյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր **Ռ.Խ. Հակոբյան**

իրավաբանական գիտությունների  
թեկնածու **Ս.Ս. Բադալյան**

**Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. մայիսի 29-ին,  
ժամը 13<sup>30</sup>-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող  
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան-0025, Ալեք  
Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2017թ. ապրիլի 28-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտ.**

**քարտուղար, Ի.գ.թ., դոցենտ**

**Ա.Ա. Մանասյան**

**Тема диссертации утверждена в  
Ереванском государственном университете**

Научный руководитель: доктор юрид. наук, профессор **Н.А. Айвазян**

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор **Р.Х. Акопян**

кандидат юрид. наук **С.С. Бадалян**

**Ведущая организация: Академия государственного управления РА**

Защита диссертации состоится 29-ого мая 2017 г. в 13<sup>30</sup> ч. на заседании  
Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции при Ереванском  
государственном университете (Ереван-0025, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников  
Ереванского государственного университета.

Автореферат разослан 28-ого апреля 2017 г.

**Ученый секретарь специализированного совета,**

**кандидат юридических наук, доцент**

**А.А. Манасян**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Իշխանությունների բաժանման սահմանադրական հաշվեկշռի արդյունավետության ապահովման գործընթացում անկյունաքարային նշանակություն ունեն, մասնավորապես, սահմանադրական հարթությամբ իրավունքի գերակայության հռչակումը և երաշխավորումը, այդ համատեքստում պետական իշխանության ճյուղերի ոչ միայն կառուցակարգային, այլև, ինչն առավել կարևոր է, գործառույթային անկախությունը երաշխավորող, ինչպես նաև դրանց գործառույթային, հակակշռող և զսպող լիազորությունների առավելագույնս հստակ բաժանում նախատեսող իրավական հիմքերը: Վերջիններս պետք է միտված լինեն իրավաստեղծ, իրավակիրառ և արդարադատության ոլորտներում պետական իշխանության ճյուղերից յուրաքանչյուրի իրավասության, ինչպես նաև գործառույթների և վերջիններիս իրականացումն ապահովող լիազորությունների միջև պատշաճ համամասնություն ապահովելուն, պետական մարմինների իրավասության և դրանց պատասխանատվության ծավալի ներդաշնակեցմանը, նշված մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ ծագող վեճերի՝ իրավական հարթությունից դուրս լուծումները բացառելուն:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ծագման նախադրյալներին և իրացման առանձնահատկություններին վերաբերող՝ հայրենական և արտասահմանյան հեղինակների մեծաթիվ աշխատություններում առաջ քաշված հարցադրումների շուրջ մոտեցումները՝ հակասական են, հաճախ՝ իրարամերժ: Դրա հետ մեկտեղ, ցայսօր տեսական և գործնական հարթություններում վերոնշյալ սկզբունքի բովանդակային ընկալման և իրացման առումներով առկա են մի շարք գիտագործնական հիմնախնդիրներ, որոնք պահանջում են համարժեք հետազոտություն: Միաժամանակ, կարևոր ենք համարում նկատել, որ թեմային առնչվող հարցադրումների շրջանակն ընտրելիս ելակետ ենք ընդունել սահմանադրական իրավունքի տեսությունում առավել տարածված այն մոտեցումը, ըստ որի՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորքային խնդիրները հիմնականում առնչվում են օրենսդիր և գործադիր իշխանության փոխհարաբերությանը: Չնսեմացնելով դատական իշխանության իրավաքաղաքական նշանակությունը, հատկապես, իշխանությունների հավասարակշռման տեսանկյունից, այնուամենայնիվ, հաշվի առնելով հետազոտության ասպեկտները, նպատակահարմար ենք գտել թեմայի հետազոտության շրջանակներում առավելապես բացահայտել օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերության ողջ համակարգը և այդ կտրվածքով անդրադառնալ նաև Հանրապետության նախագահի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի սահմանադրական կարգավիճակի հարցադրումներին, այդ թվում՝ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների լույսի ներքո: Տվյալ դեպքում, Սահմանադրական դատարանին առանձնացնելը թելադրված է վերջինիս լրջագույն դերակատարմամբ՝ իշխանության ճյուղերի մարմինների իրավասության շուրջ վեճերը լուծելու համատեքստում:

**Թեմայի գիտական հետազոտման աստիճանը:** Պետական իշխանության սահմանափակման, դրանից բխող պետական իշխանության կազմակերպական և գործառնության բաժանման շուրջ գաղափարներն առաջ են քաշվել դեռևս անտիկ ժամանակներում՝ պետության և հասարակության պատմական զարգացման տարբեր ժամանակաշրջաններում գաղափարից վերածվելով դասական տեսության և իրենց արտացոլումը գտնելով նաև իրավունքի հուշարձան մի շարք փաստաթղթերում:

Իշխանությունների բաժանման՝ որպես գաղափարի, հայեցակարգի և սահմանադրական սկզբունքի բովանդակային առանձնահատկություններին, պետական իշխանության ճյուղերի բաժանման հետ անխզելիորեն կապված դրանց հավասարակշման համատեքստում պետական իշխանության ճյուղերը մարմնավորող մարմինների միջև զսպումների և հակակշիռների համակարգի արդյունավետ գործողությունն ապահովող կառուցակարգերի բարելավման հիմնախնդիրներին անդրադարձ է կատարված բազմաթիվ հետազոտողների գիտական աշխատություններում, որոնց համարժեք անդրադարձել ենք սույն հետազոտության շրջանակում՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների բաժանման սահմանադրական հաշվեկշռի արդյունավետության բարձրացման համատեքստում վերհանված մի շարք հիմնախնդիրների քննարկման արդյունքներով՝ ներկայացնելով դրանց իրավական հարթությունում լուծումներ տալուն ուղղված առաջարկություններ, որոնց իրացումը գործնականում կարող է նպաստել պետական կառուցակարգի առավել անխափան գործառնությանը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության հիմնական նպատակն է ՀՀ նախագահի և Ազգային ժողովի, Հանրապետության նախագահի և Կառավարության, Հանրապետության Ազգային ժողովի և Կառավարության միջև փոխհարաբերությունների առկա իրավական հիմնախնդիրների վերհանումը և վերլուծությունը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ որպես իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի երաշխավորի դերակատարության բացահայտումը և այդ կապակցությամբ իշխանությունների բաժանման և հավասարակշռման իրավական կառուցակարգերի բարելավմանն ուղղված գիտական առաջարկների ներկայացումը:

Հետազոտության նպատակներին հասնելու համար առաջ քաշված հիմնական խնդիրներն են՝

- իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրաիրավական կառուցակարգերի արդյունավետության բարձրացման համատեքստում Հայաստանի Հանրապետությունում դեռևս գործող կառավարման ձևի բարեփոխման հրամայականին անդրադարձը՝ վերհանելով պետության գլխի, պետական իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների միջև փոխհարաբերություններում առկա հիմնախնդիրները.

- իշխանությունների բաժանման սահմանադրական հաշվեկշռի ապահովման գործընթացում ՀՀ սահմանադրական դատարանի դերակատարության հարցին

անդրադարձը՝ շեշտադրումը կատարելով նշված մարմնի այնպիսի կարևորագույն լիազորություններին, ինչպիսիք են Սահմանադրության պաշտոնական մեկնաբանումը և սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծումը.

- մի շարք ոլորտներում (օրենսդրական գործընթաց, ՀՀ նախագահի պաշտոնանկություն և Ազգային ժողովի արձակում) ՀՀ նախագահի և Ազգային ժողովի փոխհարաբերությունների քննարկումը՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի իրացման կառուցակարգերի բարելավման դիտանկյունից.

- իշխանությունների բաժանման սահմանադրական հաշվեկշռի ապահովման համատեքստում գործադիր իշխանության մարմինների կազմավորման և գործունեության սահմանադրաիրավական կառուցակարգերի (ՀՀ կառավարության նկատմամբ Հանրապետության նախագահի սահմանադրական ներգործություն, գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողություն) կատարելագործման ուղիների քննարկումը.

- վերոնշյալ հիմնախնդիրների քննարկման արդյունքներով դրանց լուծմանը և վերաբերելի իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված փաստարկված առաջարկներ ներկայացնելը՝ հաշվի առնելով նաև արտասահմանյան պետություններում գործող սահմանադրաիրավական կարգավորումները և ձևավորված պրակտիկան:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական երաշխիքներն են: Հետազոտության առարկա են հանդիսանում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի իրավական բովանդակությունը, Հայաստանի Հանրապետությունում գործող կառավարման ձևի ընտրության չափանիշները, ՀՀ սահմանադրական դատարանի դերակատարության հարցը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման գործընթացում, Հանրապետության նախագահ-Ազգային ժողով, Հանրապետության նախագահ-Կառավարություն և Ազգային ժողով-Կառավարություն փոխհարաբերությունների մի շարք ոլորտներում առկա՝ իրավական մակարդակում լուծումներ պահանջող հիմնախնդիրները:

**Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը:** Հետազոտության աղբյուրներն են իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսության ընկալմանը և դրա բովանդակության բացահայտմանը վերաբերող աշխատությունները, հետազոտության օբյեկտին և առարկային առնչվող մասնագիտական գրականությունը՝ մենագրությունները, ատենախոսությունները, սեղմագրերը, գիտական հոդվածները, զեկույցները, էլեկտրոնային հրապարակումները (հայրենական և արտասահմանյան), ինչպես նաև վերաբերելի իրավական ակտերը՝ ներպետական և արտասահմանյան նորմատիվ ակտերը, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա սահմանադրական դատարանների ակտերը:

**Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը:** Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (համակարգային վերլուծության, սոցիոլոգիական, պատմական) մեթոդներ: Ատենախոսության շրջանակներում լայնորեն օգտագործվել է համեմատական-իրավական մեթոդը: Նշված մեթոդների համակցված կիրառումը հնարավոր է դարձրել վերհանելու «իշխանությունների բաժանում և հավասարակշռում» եզրույթի բովանդակային դրսևորման առանձնահատկություններն Հայաստանի Հանրապետությունում, սահմանադրաիրավական հիմքերի գործողության պայմաններում իշխանությունների բաժանման և հավասարակշռման կառուցակարգերի՝ սահմանադրաիրավական ամրագրման և դրանց իրացման հետ կապված մի շարք հիմնախնդիրներ և ներկայացնել իշխանությունների բաժանման սահմանադրական հաշվեկշռի ապահովման արդյունավետ կառուցակարգերը՝ նկատի ունենալով նաև սահմանադրական փոփոխություններին համապատասխան գործողության մեջ դրվելիք կարգավորումները:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրաիրավական երաշխիքներին վերաբերող սույն ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն իրենից ներկայացնում է, մասնավորապես, Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի և Կառավարության միջև փոխհարաբերություններում զսպումների և հակակշիռների կառուցակարգերի վերաբերյալ սահմանադրաիրավական դոկտրինի և դրանց իրացման պրակտիկայի, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի երաշխավորման համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանի դերակատարության վերաբերյալ համալիր հետազոտություն, որի շրջանակներում առաջ են քաշվել և քննարկման առարկա են դարձել պետության զարգացման ներկա փուլում վերոնշյալ սկզբունքի իրացման արդյունավետության բարձրացմանը վերաբերող մի շարք արդիական հարցադրումներ՝ հաշվի առնելով սահմանադրական զարգացումների արդի միտումները: Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների բաժանման և հավասարակշռման գործող մոդելի պայմաններում պետական իշխանության մարմինների միջև զսպումների և հակակշիռների կառուցակարգերի կատարելագործման նպատակով համակողմանի անդրադարձ է կատարված դրանց միջև փոխհարաբերությունների առանցքային ոլորտներում առկա հիմնախնդիրներին, ինչի արդյունքներով արված են ոչ միայն փաստարկված եզրահանգումներ, այլև ներկայացված են առաջարկություններ, որոնց արտացոլումն իրավական ակտերում կարող է նպաստել Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների բաժանման սահմանադրական հաշվեկշռի առավել արդյունավետ ապահովմանը:

**Պաշտպանության ներկայացվող դրույթները:**

1. Կառավարման այս կամ այն ձևին նախապատվություն տալու հարցում առաջնային է ոչ միայն պետությունում իշխանության գերկենտրոնացման, քաղա-

քական մենիշխանության հնարավորությունը առավելագույնս բացառող սահմանադրաիրավական կառուցակարգերի մշակումը (լրամշակումը) և դրանց կիրարկումը, այլև սահմանադրաիրավական, քաղաքական և կուսակցական մշակույթի առկա վիճակն, ընդհանուր առմամբ՝ քաղաքական ինստիտուտների և, մասնավորապես, կուսակցական համակարգի կայացվածության աստիճանը: Այդ առնչությամբ, Հայաստանի Հանրապետության՝ կառավարման խորհրդարանական համակարգին անցմամբ պայմանավորված, օրենսդրական դաշտի բարելավման գործընթացում առաջնային ենք համարում ոչ միայն միջազգային առաջադեմ փորձի, այլև վերոնշյալ գործոնների համատեքստում կուսակցական համակարգի անձնավորված լինելու, քաղաքական հստակ գաղափարախոսություն չունեցող մեծաթիվ կուսակցությունների առկայության, խորհրդարանական և քաղաքական գործընթացների ավանդույթների բավարար չափով արմատավորված չլինելու հանգամանքները հաշվի առնելու հրամայականն այն հաշվով, որ գործընթացը միտված լինի նշված բացասական երևույթների հաղթահարմանը:

2. 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ խորհրդարանի՝ իրավունքի ուժով արձակման հիմքերի սպառիչ թվարկումն, անշուշտ, թույլ կտա խուսափել հնարավոր անհարկի հայեցողությունից: Գործնականում չի կարելի բացառել այնպիսի իրավիճակներ, երբ որոշակի հանգամանքներով պայմանավորված, խորհրդարանի բնականոն գործունեությունը տևական ժամանակով կարող է խաթարվել: Այդ կապակցությամբ, նկատի ունենալով, որ Սահմանադրությամբ հնարավոր չէ սպառիչ թվարկել օրենսդիր մարմինն արձակելու անհրաժեշտությունը հիմնավորող բոլոր իրավիճակները, կարևորում ենք նաև ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ օրենսդրի արձակման (ինքնալուծարման) հնարավորությունը նախատեսող դրույթի ամրագրումը՝ այդպիսի իրավիճակներում խորհրդարանի արձակման կառուցակարգերի՝ օրենսդրական մակարդակում մանրամասն սահմանմամբ:

3. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ սահմանադրական նոր կարգավորումների պայմաններում ՀՀ Ազգային ժողովի կողմից ընտրված անձին վարչապետի պաշտոնում նշանակելու հարցի հետ կապված, «անհապաղ» եզրույթը ժամկետային առումով կարող է տարընկալումների տեղիք տալ՝ կարևորում ենք այնպիսի մշակույթ ձևավորելու հանգամանքը, որի պայմաններում վերոնշյալ եզրույթը կընկալվի որպես «առաջին իսկ հնարավորության դեպքում» (անհետաձգելի պաշտոնական գործողություններն ավարտելուց հետո), ինչը թույլ կտա խուսափել հարցի հնարավոր անհարկի շահարկումից: Այդ առնչությամբ, Հանրապետության նախագահի կողմից վարչապետի պաշտոնում նշանակում չկատարելու կամ տևական ժամանակ նշանակում չկատարելու հարցը, մեր կարծիքով, կարող է դիտարկվել նրա սահմանադրական անգործության և համապատասխանաբար՝ սահմանադրական պատասխանատվության լույսի ներքո՝ Սահմանադրության կոպիտ խախտման հիմքով:

4. Կառավարության կազմում փոփոխությունների կատարման հարցի հետ

կապված, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 139-րդ - հոդվածի 2-րդ մասով ամրագրված կարգավորման առնչությամբ առավել ընդունելի ենք համարում Հանրապետության նախագահի՝ Սահմանադրական դատարան դիմելու պարտականության ամրագրումը: Հակառակ դեպքում, Հանրապետության նախագահի կողմից առարկության ներկայացումն ինչ-որ չափով կորցնում է իր արժեքը, քանզի դրա չընդունման դեպքում նախատեսված է համապատասխան ակտի ստորագրման հնարավորությունը:

5. Թեև 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում հարցապնդման ինստիտուտի բովանդակությունը ենթարկվել է արմատական վերանայման (մասնավորապես՝ խորհրդարանական խմբակցության առաջարկությամբ հարցապնդման պատասխանի քննարկման արդյունքով պատգամավորների որոշակի թվի կողմից Հանրապետության վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկի ներկայացման և դրա քննարկման արդյունքներով օրենսդիր մարմնի կողմից համապատասխան որոշման ընդունման հնարավորության, ինչպես նաև հարցապնդման արդյունքով խորհրդարանի կողմից վարչապետին՝ կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը քննարկելու առաջարկ ներկայացնելու հնարավորության առումներով), ինչով պայմանավորված համապատասխան կառուցակարգերի ամրագրումը սահմանադրական մակարդակում և դրանց մանրամասնումը օրենսդրական մակարդակում, ընդհանուր առմամբ, կբարձրացնի, մի կողմից, գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության արդյունավետությունը և այդ առումով՝ խորհրդարանի դերը, մյուս կողմից, կառավարության՝ որպես կոլեգիալ մարմնի կամ դրա առանձին անդամների՝ խորհրդարանի առջև հաշվետվողականության և այդ առումով՝ նրանց քաղաքական պատասխանատվության մակարդակը, այդուհանդերձ, մեր կարծիքով, հարցապնդման ինստիտուտի գործողությունը կարող է ավելի արդյունավետ լինել, եթե սահմանադրական մակարդակում ամրագրվեն Ազգային ժողովի կողմից հարցապնդման պատասխանի քննարկման արդյունքով Կառավարության անդամին անվստահություն հայտնելու հնարավորություն նախատեսող դրույթներ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հարցապնդման հասցեատերը Կառավարության համապատասխան անդամն է և - հենց նրա սահմանադրական պարտականությունն է պատասխանել հարցապնդմանը:

6. Սահմանադրական նոր կարգավորումների պայմաններում (Սահմ. հոդվ. 87, 156) արդիական ենք համարում օրենսդրությամբ Կառավարության ամենամյա զեկույցի քննարկման արդյունքներով Ազգային ժողովի կողմից Կառավարության գործունեության արդյունքներին իրավական (քաղաքական) գնահատական տալու հնարավորություն նախատեսող գործուն կառուցակարգերի ամրագրումը՝ նկատի ունենալով այն, որ Սահմանադրության 87-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ պետական մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են լինելու իրագործել Սահմանադրութ-

յան 86-րդ հոդվածով սահմանված նպատակները, ինչպես նաև այն հանգամանքը, որ կառավարության հաշվետվողականությունը օրենսդրի առջև սովորաբար ենթադրում է ոչ միայն սոսկ տեղեկատվության ներկայացում, որը տվյալ դեպքում արտացոլվելու է Կառավարության ամենամյա զեկույցում, այլև՝ դրա քննարկում և քննարկման արդյունքներով Կառավարության կամ դրա ղեկավարի համար իրավական (քաղաքական) հետևանքների վրա հասնելու հնարավորություն: Նշված դեպքում դրանք կարող են դրսևորվել խորհրդարանի կողմից Կառավարությանը կամ վարչապետին անվստահություն հայտնելով:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:** Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել «ՀՀ սահմանադրական իրավունք», «Համեմատական սահմանադրական իրավունք», «Պառլամենտական իրավունք» և այլ դասընթացների շրջանակներում, որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին, ինչպես նաև հետագա գիտական հետազոտություններում: Հետազոտության թեմայի առնչությամբ կատարված վերլուծությունը, ներկայացված առաջարկություններն ու դրանց հիմնավորումները կարող են նպաստել ՀՀ օրենսդրության կատարելագործմանը և նախընտրելի իրավական մշակույթի ձևավորմանը:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի՝ հրատարակված գիտական հոդվածներում: Դրանք նաև ներկայացվել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների ամենամյա գիտական նստաշրջաններում:

#### **Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրափակիչ մասից (եզրահանգումներ) և օգտագործված գրականության ցանկից:

**Ներածության** մեջ հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացված են դրա գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտը և առարկան, ատենախոսության աղբյուրագիտական, մեթոդաբանական և փորձարարական հիմքերը, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները, ինչպես նաև հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության՝ **«Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը՝ որպես իրավական պետության կարևորագույն բնութագրիչ»** վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

**«Իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումը՝ որպես պետական իշխանության կազմակերպման և գործառնության կարևորագույն սկզբունք»** վերտառությամբ առաջին ենթագլխում հեղինակը, մասնավորապես, անդրադարձել է «իշխանությունների բաժանում և հավասարակշռում» արտահայտության իրավաբանական բովանդակությանը և, իմի բերելով իշխանությունների բաժանման տեսության ընկալման հարցի հետ կապված իրավաբանական գրականության մեջ առկա մոտեցումները, հանգել է հետևության, որ իշխանությունների բա-

ժանման սկզբունքը պետք է կյանքի կոչվի՝ հաշվի առնելով յուրաքանչյուր կոնկրետ պետության առանձնահատկությունները՝ առանց դրա էությունը խեղաթյուրելու: Ընդ որում, իշխանությունների բաժանման սահմանադրական հաշվեկշիռն առավել արդյունավետ է գործում պետական իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ և գործառնության անկախությունը երաշխավորող, դրանց լիազորությունների առավելագույնս հստակ բաժանում նախատեսող ու վերջիններիս հակակշռումն ապահովող սահմանադրաիրավական կառուցակարգերի առկայության պայմաններում:

**«ՀՀ կառավարման ձևի բարեփոխման հրամայականը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական կառուցակարգերի արդյունավետության բարձրացման համարեքստում»** վերտառությամբ *երկրորդ ենթագլխում* հեղինակն, անդրադարձել է հանրապետական կառավարման ձևի տարբեր մոդելների առավելություններին և թերություններին, այդ թվում՝ միջազգային փորձի ուսումնասիրություն արդյունքներով, և Հայաստանի Հանրապետությունում գործող սահմանադրական համապատասխան կարգավորումների վերլուծության հիման վրա վեր է հանել Հայաստանում հանրապետական կառավարման ձևի «խորհրդարանական-նախագահական մոդելի» բացերը՝ արձանագրելով, որ Հայաստանի Հանրապետությունում գործող կառավարման ձևը ներկայիս սահմանադրական կարգավորումների պայմաններում հնարավոր չի դարձնում Սահմանադրությամբ ամրագրված իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի արդյունավետ իրացումը՝ պայմանավորված ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով և այդ առնչությամբ անելով որոշ հետևություններ:

**«ՀՀ սահմանադրական դափարանը՝ որպես իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի երաշխավոր»** վերտառությամբ *երրորդ ենթագլխում* մանրամասնված են բազմաթիվ պետություններում դատական սահմանադրական վերահսկողության մարմիններին վերապահված այնպիսի կարևորագույն լիազորություններ, ինչպիսիք են Սահմանադրության պաշտոնական մեկնաբանումը և պետության սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ ծագող վեճերի լուծումը՝ որոնք ունեն կարևորագույն նշանակություն իշխանությունների բաժանման սահմանադրական հաշվեկշռի ապահովման գործընթացում: Այդ առնչությամբ, հեղինակը, հղում կատարելով նաև ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումների, անդրադարձել է Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության պաշտոնական վերացական մեկնաբանման հարցին՝ միաժամանակ նշված հարցի համատեքստում կարևորելով սահմանադրական մարմինների միջև դրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ ծագող սահմանադրական վեճերի լուծման անհրաժեշտությունը՝ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով պայմանավորված ուժի մեջ մտնելիք սահմանադրական կարգավորումների լույսի ներքո: Սահմանադրության գերակայության ապահով-

ման առումով ընդգծված է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ ծագած վեճերի հարցով սահմանադրական դատարան դիմելու և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման միջոցով այդ մարմինն վերապահված համապատասխան լիազորության գործնականում իրացման արդյունքներով համապատասխան պրակտիկայի ձևավորման կարևորությունը:

Ատենախոսության՝ **«Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի իրացման կառուցակարգերի բարելավման հիմնախնդիրը ՀՀ նախագահի և Ազգային ժողովի փոխհարաբերությունների ոլորտում»** վերտառությամբ երկրորդ գլխի «**ՀՀ նախագահի կողմից հեղինակավորության (վեպոյի) իրավունքի իրացման արդյունավետության բարելավման հիմնախնդիրը**» վերտառությամբ առաջին ենթագլխում վեր են հանված օրինաստեղծ գործընթացում Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի փոխհարաբերությունների ոլորտում առկա մի շարք հիմնախնդիրներ, այդ թվում՝ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների համատեքստում, որոնք ենթադրում են Հանրապետության նախագահի վետոյի իրավունքի՝ բովանդակային առումով վերանայում: Այդ առնչությամբ, հեղինակը, ներկայացնելով սեփական փաստարկները, ինչպես նաև արտասահմանյան մի շարք պետություններում գործող սահմանադրական վերաբերելի կարգավորումների ուսումնասիրության արդյունքներով, կարևորվել է Ազգային ժողովի կողմից ընդունված և Հանրապետության նախագահի ստորագրմանը ներկայացված սահմանադրական օրենքների՝ պարտադիր սահմանադրական վերահսկողության օբյեկտ դառնալու հանգամանքը:

**«Ազգային ժողովի կողմից ՀՀ նախագահի պաշտոնանկության ոլորտում առկա հիմնախնդիրների բարելավման հիմնական ուղղությունները»** վերտառությամբ երկրորդ ենթագլխում հեղինակը մանրամասն անդրադարձել է այդ առնչությամբ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ գործող օրենքով նախատեսված իրավակարգավորումների (հոդ. 76, մասեր 3, 5, 9, 10, 13) բացերին և թերություններին՝ ներկայացնելով որոշ իրավական առաջարկություններ՝ ուղղված հարցին առնչվող օրենսդրական կառուցակարգերի բարելավմանը: Հեղինակի կարծիքով, Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու սահմանադրական հիմքերի շարքում, թերևս, կարող էր նախատեսվել նաև նրա երդմնագանցությունը, քանզի այն ենթադրում է նրա կողմից ոչ միայն ՀՀ Սահմանադրությանը հավատարիմ լինելու, այլև իր լիազորություններն իրականացնելիս անաչառ լինելու, միայն համապետական ու համազգային շահերով առաջնորդվելու, ինչպես նաև ազգային միասնության ամրապնդման գործում իր ողջ ուժը ներդնելու՝ Հանրապետության նախագահի երդման տեքստում (2015թ. փոփոխ. Սահմ. հոդ. 127, մաս 3) արտացոլված պարտականությունների չկատարում, որոնց մի մասն ուղղակիորեն կապված է Հանրապետության նախագահի սահմա-

նադրական կարգավիճակի հետ: Իսկ երդումը ՀՀ նախագահը տալիս է ժողովրդին: Հետևաբար՝ նախագահի կողմից սեփական երդման դրժումը պետք է հիմք հանդիսանա նրան պաշտոնանկ անելու համար՝ ժողովրդի կողմից ընտրված մարմնի՝ Ազգային ժողովի կողմից:

**«Ազգային ժողովն արձակելու՝ Հանրապետության նախագահի սահմանադրական լիազորության իրացման հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ երրորդ ենթագլխում, անդրադառնալով Ազգային ժողովի արձակմանը վերաբերող սահմանադրական գործող կարգավորումներին, հեղինակը հանգել է հետևության, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 74.1-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված կարգավորումների պայմաններում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական կառուցակարգերը արդյունավետ չեն կարող գործել՝ այդ առնչությամբ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ: Ազգային ժողովի՝ իրավունքի ուժով արձակման սահմանադրական նոր կառուցակարգերի առնչությամբ, առաջարկվել է սահմանադրական մակարդակում նաև ամրագրել Ազգային ժողովի որոշմամբ օրենսդրի արձակման (ինքնալուծարման) հնարավորություն նախատեսող դրույթ, որպիսի կարգավորումը բնորոշ է արտասահմանյան որոշ պետությունների:

Ատենախոսության՝ **«Գործադիր իշխանության մարմինների կազմավորման և գործունեության ու գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության սահմանադրաիրավական կառուցակարգերի կարարելա-գործման հիմնահարցերը»** վերտառությամբ երրորդ գլխի **«Գործադիր իշխանության մարմինների ձևավորման և գործունեության նկատմամբ ՀՀ նախագահի ներգործության սահմանադրական կառուցակարգերի բարելավման ուղղությունները»** վերտառությամբ առաջին ենթագլխում անդրադարձ է կատարված, մասնավորապես, սահմանադրական գործող կարգավորումների պայմաններում վարչապետի թեկնածության առաջադրման ու նրա նշանակման, կառավարության անդամների նշանակման, գործադիր իշխանության մարմինների համակարգի և դրանց գործունեության կազմակերպման գործընթացներում առկա մի շարք հիմնախնդիրների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության՝ խորհրդարանական կառավարման համակարգին անցմամբ պայմանավորված, 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ներդրված և ուժի մեջ մտնելիք՝ վարչապետի ընտրության և նշանակման, կառավարության կազմավորման և գործունեության նոր կառուցակարգերին: Այդ առնչությամբ, հեղինակի կողմից առանձնացվել են խնդրահարույց որոշ հարցեր և ներկայացվել են դրանց հնարավոր լուծումները սահմանադրական և օրենսդրական մակարդակներում:

**«Գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության որոշ կառուցակարգերի ներդրման (վերանայման) հիմնախնդիրը սահմանադրական փոփոխությունների համապեքսությունում»** վերտառությամբ

երկրորդ ենթագլխում արծարծված են գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մի շարք ձևերի և դրանց կատարելագործմանն ուղղված սահմանադրաիրավական կառուցակարգերի բարելավման խնդիրները: Այդ հա-մատեքստում, առանձնակի կարևորություն է տրված հարցա-պնդման ինստիտուտի գործողության արդյունավետության բարձրացման հարցին: Այդ կապակցությամբ, անցկացնելով համեմատականներ սահմանադրական գործող և նոր կարգավորումների միջև, հեղինակը, նաև միջազգային փորձի հա-մարժեք ուսումնասիրության արդյունքներով, ներկայացրել է դրանց բարելավ-մանն ուղղված որոշ առաջարկություններ: Անդրադարձ է կատարված նաև խորհրդարանի կողմից Կառավարությանը, վարչապետին կամ Կառավարության անդամին անվստահություն հայտնելու խնդրին, ինչպես նաև Կառավարության կողմից Ազգային ժողովին տարեկան զեկույցի ներկայացման հարցի հետ կապ-ված, վերջինիս քննարկման արդյունքներով օրենսդրի կողմից Կառավարության գործունեության արդյունքներին իրավական (քաղաքական) գնահատական տա-լու հնարավորություն նախատեսող գործուն կառուցակարգերի օրենսդրական ամրագրման հարցին:

**Եզրահանգումների** շրջանակում ընդհանրացված են հետազոտության կար-ևոր հետևությունները:

1. Իշխանությունների բաժանման՝ որպես գաղափարի, հայեցակարգի և սահ-մանադրական սկզբունքի բովանդակությունը՝ ժամանակի մարտահրավերներով պայմանավորված, ենթարկվել է էական փոփոխությունների, և առաջնային է դարձել այդ կապակցությամբ առաջադրված դոկտրինայի նոր մոտեցումներն հաշ-վի առնելու, իրացնելու հրամայականը: Դրա հետ մեկտեղ, նոր մոտեցումների մշակումը և դրանց իրացումն ամենևին չի ենթադրում դասական մոտեցումների խեղաթյուրում՝ առանց հաշվի առնելու այն իրողությունները, որոնց պայմաննե-րում դրանք ծնունդ են առել, ինչպես նաև դրանք ժամանակակից իրողություննե-րին ամբողջությամբ համապատասխանեցնելու անհնարինության գործոնը:

2. 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ Սահմանադ-րական դատարանին սահմանադրական մարմինների միջև դրանց սահմանադ-րական լիազորությունների առնչությամբ ծագող սահմանադրական վեճերի լուծ-ման լիազորությամբ օժտելը թույլ կտա իրավական լուծում տալ դրանց: Թեև ՀՀ - Սահմանադրության 6-րդ հոդվածին (1-ին մաս) համապատասխան՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավա-սու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, այդուհանդերձ, սահմանադրական մարմինների միջև իրավասության հետ կապված վեճերի ծագման հնարավորութ-յունը չպետք է բացառել: Իսկ առանց նշված վեճերի քննության և լուծման օ-րենսդրական պատշաճ կառուցակարգերի, պետության սահմանադրական մար-մինների միջև հնարավոր հակադրությունները կարող են հանգեցնել տևական անկայունության:

**3.** Կարևորում ենք այն հանգամանքը, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված և Հանրապետության նախագահի ստորագրմանը ներկայացված սահմանադրական օրենքները դառնան պարտադիր սահմանադրական վերահսկողության օբյեկտ՝ ՀՀ սահմանադրական դատարանին սահմանադրական մակարդակում համապատասխան լիազորության վերապահմամբ: Այդ առնչությամբ, թեև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված կարգավորումներին համապատասխան՝ Հանրապետության նախագահը 21-օրյա ժամկետում կարող է դիմել սահմանադրական դատարան՝ օրենքի (այդ թվում՝ սահմանադրական օրենքի) սահմանադրականությունը որոշելու հարցով, սակայն խնդիրը կայանում է նրանում, որ նա պարտավոր է լինելու այդ հարցով դիմել սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ վերոնշյալ ժամկետում չստորագրի և չհրապարակի Ազգային ժողովի ընդունած օրենքը: Այլ կերպ ասած՝ քննարկվող հարցով սահմանադրական դատարան դիմելու հետ կապված, Հանրապետության նախագահն ունենալու է հայեցողություն: Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ սահմանադրական նոր կարգավորումներին համապատասխան՝ սահմանադրական առանձին օրենքներ ուժի մեջ կմտնեն նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը, երբ ուժի մեջ կմտնի նաև ՀՀ Սահմանադրության՝ օրենքի ստորագրմանը և հրապարակմանը վերաբերող 129-րդ հոդվածը, ինչով պայմանավորված, դրանով ամրագրված կարգավորումները հնարավոր չի լինի իրացնել մի շարք սահմանադրական օրենքների առնչությամբ:

**4.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի՝ Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն տալու վերաբերյալ գործերի քննությանը վերաբերող 76-րդ հոդվածով նախատեսված առանձին իրավակարգավորումներ, մեր կարծիքով, խրթին են և կարիք ունեն վերանայման: Մասնավորապես՝ վերոնշյալ օրենքի 76-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ է գտել «...որքանով դա չի կարող վնաս պատճառել իր իրավունքներին և ազատություններին» ձևակերպումը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Հանրապետության նախագահի կարգավիճակ ունեցող սուբյեկտին՝ գտնում ենք, որ վերջինիս նկատմամբ նշված ձևակերպումը կիրառելի չէ: Այդ առումով, առավել ընդունելի լուծում է ՀՀ - սահմանադրական դատարանի կողմից վերոնշյալ գործերի քննության ընթացքում ՀՀ նախագահի լիազորությունների կասեցված լինելն օրենսդիր մարմնի կողմից, որպիսի իրավակարգավորումներ են գործում արտասահմանյան որոշ երկրներում: Ընդ որում՝ կասեցման ժամկետը պետք է ընդգրկի Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հարցի մասին եզրակացություն ստանալու համար Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման ընդունման օրվանից մինչև Հանրապետության նախագահի պաշտոնանկության գործընթացի ավարտն ընկած ժամանակահատվածը:

Մեր կարծիքով, խնդրահարույց է նաև «Սահմանադրական դատարանի մա-

սին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 5-րդ մասում տեղ գտած այն ձևակերպումը, որի համաձայն՝ գործի վարույթը չի կարող կարճվել ՀՀ նախագահի հրաժարականի կամ այլ հիմքով նրա լիազորությունների դադարման դեպքերում: Օրենքի նույն հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ եթե գործի դատաքննության ժամանակ դիմող կողմը (Ազգային ժողովը) հրաժարվում է դիմումից, և ՀՀ նախագահը եռօրյա ժամկետում չի առարկում դրա դեմ, ապա գործի վարույթը ենթակա է կարճման: Այս կապակցությամբ, չի կարելի բացառել մի իրավիճակ, երբ Հանրապետության նախագահը հնարավորություն չի ունենա առարկել Ազգային ժողովի կողմից ներկայացված «մեղադրական» դիմումից հրաժարվելու դեմ՝ հրաժարականի կամ այլ հիմքով նրա լիազորությունների դադարման դեպքերում: Բացի այդ, մեր կարծիքով, այնքան էլ տեղին չէ Սահմանադրական դատարանի կողմից Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի մասին եզրակացության ընդունումը ՀՀ նախագահի հրաժարականի կամ այլ հիմքով նրա լիազորությունների դադարման դեպքերում, երբ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ նշված հիմքերով գործի վարույթը չի կարճվում: Ակնհայտ է, որ նշված դեպքերում դատավարության մասնակիցը կորցնում է Հանրապետության նախագահի իր սահմանադրական կարգավիճակը, և ստեղծված իրավիճակում հստակ չէ, թե ինչ եզրակացություն պետք է ընդունի Սահմանադրական դատարանը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածում տեղ գտած վերոնշյալ ոչ հստակ ձևակերպումները, ինչպես նաև առկա բացերը կարիք ունեն ճշգրտման և լրացման, ինչը թույլ կտա խուսափել Սահմանադրական դատարանի կողմից Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի մասին եզրակացություն տալու վերաբերյալ գործերի քննության ընթացքում օրենսդրական հստակ կանոնակարգում չստացած իրավիճակներից:

5. Պետք է փաստել, որ սահմանադրական գործող կարգավորումների պայմաններում Հանրապետության նախագահն ունի գործադիր իշխանության նկատմամբ ներգործության ազդեցիկ լծակներ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ՀՀ կառավարության կազմավորման գործընթացին և Կառավարության ու դրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգի սահմանմանը: Այդ հանգամանքը որոշակիորեն ազդում է Կառավարության ինքնուրույնության վրա, սահմանափակում նրա ազատ գործելու հնարավորությունը, ինչը նվազեցնում է Կառավարության պատասխանատվությունը Սահմանադրությամբ նախատեսված ոլորտներում արդյունավետ կառավարում իրականացնելու հարցում:

6. 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված կարգավորումներին համապատասխան՝ Կառավարության կազմավորման գործընթացում Հանրապետության նախագահն ունենալու է, ըստ էության, ձևական (ոչ բացարձակ առումով) դերակատարում: Այդ կապակցությամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության՝ կառավարման խորհրդարանական համա-

կարգին անցմամբ պայմանավորված, ՀՀ Ազգային ժողովի քաղաքական դերակատարության շեշտակի աճի հանգամանքը երկրի կյանքում, այդ թվում՝ սահմանադրական մակարդակում կանոնակարգում ստացած իրավաքաղաքական գործընթացներում, պետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնի ղեկավարի նշանակման (ընտրության) գործընթացում առնվազն տեսականորեն խորհրդարանն ունենալու է «անսահմանափակ» դերակատարություն: Այդ առնչությամբ, մեր կարծիքով, սահմանադրական մակարդակում կարելի է ամրագրել վարչապետի թեկնածության առաջադրման գործընթացին Հանրապետության նախագահի մասնակցության վերաբերյալ դրույթներ, ինչպես խորհրդարանական կառավարման ձև ունեցող մի շարք երկրներում, թեև սահմանադրական փոփոխությունների արդյունքում վերացվել է իշխանության երեք թևերի բնականոն գործունեությունն ապահովելու՝ 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ ամրագրված դրույթը, ամրագրվել են դրույթներ, որոնց համաձայն՝ Ազգային ժողովն է ընտրելու Հանրապետության նախագահին և վերջինս իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ (Սահմ. հոդ. 124, մաս 5, հոդ. 125):

7. Մեր կարծիքով, խնդրահարույց են 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 139-րդ հոդվածի 3-րդ մասով և 150-րդ հոդվածով ամրագրված կարգավորումները, համապատասխանաբար՝ Հանրապետության նախագահի կողմից սահմանադրական պահանջների չկատարման դեպքերում համապատասխան ակտի՝ իրավունքի ուժով ուժի մեջ մտնելու և համապատասխան փոխվարչապետի կամ նախարարի՝ իրավունքի ուժով նշանակված համարվելու առումներով: Սահմանադրական նշված կարգավորումների գործողության պայմաններում չի բացառվում Սահմանադրությանը հակասող ակտի ուժի մեջ մտնելու հնարավորությունը, ինչը կարող է առնվազն վտանգել իշխանությունների բաժանման սահմանադրական հաշվեկշիռը:

8. 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «Սահմանադրության ...139-րդ հոդվածի 2-րդ մասով, 150-րդ հոդվածով, ինչպես նաև 168-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով սահմանված դեպքերում» ձևակերպումից հստակ չէ, թե Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասով և 150-րդ հոդվածով սահմանված դեպքերը Սահմանադրական դատարանի որ լիազորությանն են առնչվում՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ սահմանադրական կարգավորումներին համապատասխան՝ Սահմանադրական դատարանի լիազորությունները սահմանված են Սահմանադրությամբ: Այդ առնչությամբ, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների բնույթը և դրանց սպառիչ լինելու հանգամանքը՝ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասով և 150-րդ հոդվածով սահմանված կարգավորումները, մեր կարծիքով, հնարավոր է կապել միայն Սահմանադրական դատարանի՝ սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի լուծման

լիազորության հետ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով հստակեցնելով նշված հարցով Սահմանադրական դատարանի կողմից ընդունվելիք որոշումների տեսակները և ամրագրելով դրանց բովանդակությունը:

**9.** Հարցապնդման հետ կապված, սահմանադրական և օրենսդրական գործող դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ գործադիր իշխանության նկատմամբ իրականացվող խորհրդարանական վերահսկողության նշված ձևը կենսունակության առումով չի բովանդակում արդյունավետ կառուցակարգեր՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով: Մասնավորապես, խորհրդարանում հարցապնդման քննարկման արդյունքներով Ազգային ժողովի որոշման ընդունման հարցի առնչությամբ օրենսդիրը նախատեսել է հայեցողություն, այլ ոչ պարտականություն: Բացի այդ, հարցապնդման քննարկման արդյունքում Ազգային ժողովը կարող է ընդունել իրավասու պետական կառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց բացառապես առաջարկություններ ներկայացնելու մասին որոշում, որն առաջ չի բերում իրավական և քաղաքական հետևանքներ: Վերջապես, էապես սահմանափակված է խմբակցության կամ պատգամավորական խմբի կողմից Կառավարությանը հարցապնդումով դիմելու հաճախականությունը՝ նույն հերթական նստաշրջանի ընթացքում ոչ ավելի, քան մեկ անգամ, բացառությամբ այն հարցապնդման, որը քննարկելուց խմբակցությունը կամ պատգամավորական խումբը հրաժարվել է: Այդ կապակցությամբ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կառավարության իրավասությանը վերապահված հարցերի շրջանակը չափազանց լայն է, մեր կարծիքով, Կառավարությանը հարցապնդումով դիմելու ժամկետային գործող սահմանափակումը չի կարող արդարացված համարվել:

**10.** Հարկ է նշել, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 113-րդ հոդվածում (մաս 2), մի դեպքում, գործածվում է «հարցապնդման պատասխանի քննարկման արդյունքով», մյուս դեպքում՝ «հարցապնդման արդյունքով» ձևակերպումը: Վերջինս, ըստ էության, չի բացառում Ազգային ժողովի կողմից վարչապետին Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը քննարկելու առաջարկի ներկայացումը՝ առանց հարցապնդման պատասխանը Ազգային ժողովի նիստում խմբակցության առաջարկությամբ քննարկելու: Մինչդեռ, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 11-րդ մասում, այդ առնչությամբ, տեղ է գտել «հարցապնդման քննարկման արդյունքով» ձևակերպումը և ամրագրվել է դրույթ, որին համապատասխան՝ հարցապնդման քննարկման արդյունքով խմբակցության ներկայացուցիչը կարող է իր եզրափակիչ ելույթում հայտարարել, որ խմբակցությունը նախատեսում է Սահմանադրության 113-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ վարչապետին անվստահություն հայտնելու մասին առաջարկ ներկայացնել, այն դեպքում, երբ սահմանադրական վերոնշյալ դրույթին համապատասխան՝ այդպիսի առաջարկ կարող է ներկայացնել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը:

11. Խորհրդարանի կողմից Կառավարության առանձին անդամին անվտանգություն հայտնելու հնարավորություն նախատեսող դրույթների ամրագրումը սահմանադրական մակարդակում, մեր կարծիքով, լուրջ խթան կհանդիսանա Կառավարության անդամի՝ խորհրդարանական պատասխանատվության և այդ համատեքստում վերջինիս «զգոնության» բարձրացման գործընթացում: Հարկ է նկատել, որ օրենսդիր մարմնի կողմից Կառավարության առանձին անդամին անվտանգություն հայտնելը հանգեցնում է ոչ թե Կառավարության կամ դրա ղեկավարի՝ վարչա-պետի, հրաժարականին, այլ բացառապես նրա լիազորությունների դադարեցմանը, ինչը, մի կողմից, չի խոչընդոտում Կառավարության բնականոն գործունեությանը, մյուս կողմից, հանդիսանում է համապատասխան ոլորտում արձանագրված թերացումները և բացթողումները շտկելուն, լրացնելուն ուղղված քայլեր ձեռնարկելուն դրդող կարևորագույն լծակ:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Գործադիր իշխանության մարմինների ձևավորման և գործունեության նկատմամբ ՀՀ Նախագահի ներգործության սահմանադրական որոշ կառուցակարգերի բարելավման ուղղությունները (ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու), ԵՊՀ հրատ., 2014, էջեր 23-34:

2. Կառավարության կազմավորման հարցում ՀՀ Նախագահի ներգործության սահմանադրական կառուցակարգերի բարելավման ուղղությունները // Պետություն և իրավունք, թիվ 1 (63), Երևան 2014, էջեր 23-33:

3. Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից վետոյի իրավունքի իրականացման արդյունավետության որոշ հիմնախնդիրներ // Պետություն և իրավունք, թիվ 3-4 (65-66), Երևան 2014, էջեր 21-31:

4. ՀՀ կառավարման ձևի բարեփոխման հրամայականը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական կառուցակարգերի արդյունավետության բարձրացման համատեքստում (ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014թ. գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու), ԵՊՀ հրատ., 2015, էջեր 67-85:

5. Գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության կառուցակարգերի բարելավման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու), ԵՊՀ հրատ., 2016, էջեր 81-97:

6. Վարչապետի նշանակման և Կառավարության կազմավորման իրավական կառուցակարգերի բարելավման հիմնախնդիրը սահմանադրական փոփոխությունների համատեքստում // Դատական իշխանություն, թիվ 1-2/211-212, Երևան-2017, էջեր 28-33:

**САРГСЯН МЕРИ МНАЦАКАНОВНА**

**КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ГАРАНТИИ РАЗДЕЛЕНИЯ  
И БАЛАНСА ВЛАСТЕЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**РЕЗЮМЕ**

В аспекте содержательного восприятия и реализации принципа разделения и баланса властей на сегодняшний день в теоретической и практической плоскостях имеется ряд научно-практических проблем, требующих равноценного изучения, в том числе и с точки зрения конституционно-правовых гарантий вышеуказанного принципа.

При выборе вопросов, затрагивающих тему диссертации, в качестве исходной точки нами избран тот существующий в теории конституционного права и являющийся наиболее распространенным подход, согласно которому глубинные проблемы разделения и баланса властей главным образом касаются взаимоотношений законодательной и исполнительной властей. Не умаляя политико-правового значения судебной власти, особенно с точки зрения баланса властей, однако учитывая аспекты исследования, мы посчитали целесообразным в рамках темы исследования наиболее широко раскрыть всю систему взаимоотношений между законодательной и исполнительной властями, и в этом аспекте затронуть также вопросы относительно конституционного статуса Президента Республики, а также Конституционного Суда, в том числе и в свете конституционных реформ 2015 года. В данном случае выделение Конституционного Суда продиктовано той серьезной ролью, которую он играет в контексте разрешения споров о компетенции органов ветвей власти.

Научная новизна диссертации обусловлена тем обстоятельством, что представляет собой, в частности, комплексное исследование относительно конституционно-правовой доктрины механизмов сдержек и противовесов и практики их реализации во взаимоотношениях между Президентом, Национальным Собранием и Правительством Республики, а также роли Конституционного Суда РА в контексте гарантирования конституционного принципа разделения и баланса властей. В рамках исследования выдвинут и подвергнут обсуждению ряд актуальных вопросов, касающихся повышения

эффективности реализации вышеуказанного принципа на современном этапе развития государства с учетом актуальных тенденций конституционного развития. В условиях действующей в Республике Армения модели разделения и баланса властей в целях совершенствования механизмов сдержек и противовесов между органами государственной власти проведено всестороннее исследование проблем, существующих в основных сферах их взаимоотношений, в результате чего сделаны не только аргументированные выводы, но и выдвинуты предложения, отражение которых в правовых актах может способствовать более эффективному обеспечению конституционного баланса разделения властей в Республике Армения.

Проведенный в рамках диссертации анализ, выдвинутые предложения и их обоснование могут способствовать совершенствованию законодательства РА и формированию предпочтительной правовой культуры.

Основные положения диссертации отражены в опубликованных научных статьях автора. Они также были представлены на ежегодных научных заседаниях аспирантов и соискателей Юридического факультета ЕГУ.

**THE CONSTITUTIONAL LEGAL GUARANTEES OF SEPARATION AND BALANCE OF  
THE POWERS IN THE REPUBLIC OF ARMENIA**

**SUMMARY**

Until now there are several scientific-practical issues in the theoretical and practical fields related to the content perception and implementation of the principle of separation and balance of the powers, which, in its turn, require equivalent study to be conducted, including a research driven from the viewpoint of the constitutional legal guarantees of the above mentioned principle.

While deciding the scopes of the research questions related to the theme of the given dissertation, we have taken as a starting point a widely known approach of the constitutional law theory, according to which the in-depth matters of separation and balancing of the powers are mainly related to the co-relation of legislative and executive power branches. Without diminishing the legal-political significance of the judicial power, especially then it comes to balancing of powers, nevertheless, while taking into account the specific aspects of the given research, within the frames of the topic of the respective study we have considered it expedient to disclose the entire system of co-relations between the legislative and executive branches of power, and with the respect to this aspect, also to address the questions in regard to the constitutional status of the President of the Republic of Armenia, as well as the Constitutional Court, particularly under the light of the Constitutional Amendments of 2015. In this case, the focus on the Constitutional Court is dictated by the latter's significant engagement in the matters of settling disputes related to the scopes of competences of the branches of power.

The scientific novelty of the dissertation is conditioned with the circumstance, that in essence it is, particularly, the complex research in regard to constitutional-legal doctrine of system of checks and balances and the practice of its implementation in co-relations between the President of the Republic, the National Assembly and the

Government, as well as the role of the Constitutional Court of the Republic of Armenia in the context of guaranteeing of the constitutional principle of separate and balance of the powers. Within the frames of the given research, several contemporary matters in regard of boosting the efficiency of implementation of the above-mentioned principle have been pointed out and have been discussed, taking into consideration, surely, the current conditions of development of the state and contemporary tendencies of constitutional development. In the conditions of the existing model of separation and balance of the powers in the Republic of Armenia, with the aim of improvement of structural systems of the checks and balances of state power - a comprehensive study has been conducted on the issues existing in the main field of their interaction, as a result of which not only reasoned conclusions have been drawn, but furthermore, the respective suggestions have been proposed, and their reflection in the legal acts can contribute to more effective guaranteeing of constitutional balance of the separation of powers in the Republic of Armenia.

The analysis implemented within the frames of the dissertation, the presented suggestions, and their groundings can positively contribute to the improvement of the legislation of the Republic of Armenia and to the formation of preferable legal culture.

The main provisions of the given dissertation have been reflected in the scientific articles published by the author. The above-mentioned articles have also been presented at the annual scientific sessions of Ph.D. candidates and fellow applicants of the Law Faculty at the Yerevan State University.